

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԼՈՒՍԱԽՈՐԶԷՆ ՅԱՌԱՋ

(Շարունակութիւն, տես Բազմավեպ 1927, էջ 9)

13. Նոյնքան անօգուտ է հայկական դատին՝ առաքելոյն նշխարաց գիւտին պատմութիւնն ալ, զոր զարձեւալ Ս. Ղազարու ճառքն տիրենք՝ հանելով՝ հրատարակեց Հ. Աւգերեան², և որոց հնագուէնէն կը համառօտեմ հոս՝ մեծագոյն հաստատութեան համար։ Իւր աղբերաց պէս միջնադարեան շարադրութիւն, և միանգամայն առասպելական է գրուածդ։ Զի այն որ չկար հայ հողին վրայ, չէր կարող յայտնուիլ օր մը։ Ահա թէ ինչպէս կը վիպէ ճառագիրը։ «Յամա Յազկերտի փոքու Պարսից արքայի», կ'ըսէ, ասորի բարեպաշտ եպիսկոպոսը Մարութա կը շինէ (կամ կը զարգարէ)³ Նիբրա կերտ կամ Մարտիրոսաց քաղաքը (յետ 410 թուականին⁴, ս. Սահակայ օրով), և հոն կը հաւաքէ անբաւ նշխարներ։ Ուզելով ունենալ Բարթողոմէոսին ալ, «բազում ցանկութեամբ ել ի Հայս, ... և եգիտ զնա վկայեալ ի յՈրիանոս քաղաք ի Հայս, ի տեղին որ ասի Բարմ»։ և հարցնելով կը տեղեկանայ՝ որ առաքելոյն նշխարներն էին «ի պահեստի ծածկեալ ի ներքս ի քեմի անդ» (ուստի եկեղեցւոյ մը մէջ)։ Եւ իւր երկու ուղեկիցներով հոն տասներկու օր պահօց և աղթիւք կ'անցնէ, որպէս զի Աստուած «ցուցցէ գտեղին ուր սուրբ նշխարն իցնէ», և կատարէ իրենց փափաքը՝ «առանց խռովութեանց աշխարհին Հայոց»։ Եւ անա «ի մէջ գիշերին» շարժմամբ կը պատուի գերեզմանը, ուսկից լոյս կը ցայտէ. և նշխարակապուտ ասորին ձեռքը ներս մխելով՝ կը հանէ հոգևոր գանձը,

Հայոց թողլով հոն՝ իբր շնորհ՝ «մասն ինչ» միայն. և «նոյնժամայն ծածկեցաւ տեղին որպէս զառաջինն, և ոչ ոք գիտաց զիրան որ եղեն՝ ըստ տեսչութեանն Աստուծոյ»։ մինչդեռ մեր ժամանակաւ կից հայրապետը, որ նոյնպէս ընտանի էր տեսիլներու, զրկուած կը մնայ Հայոց առաքելոյն նշխարաց յայտնութեան շնորհքէն։

Բնական է որ նախ հարցնենք. եթէ «ոչ ոք գիտաց» պատահածը, մեր այդ երանելի պատմիչն ինչպէս իմացաւ ուրիշն էր պիտի ըսեմ՝ թէ ինչպէս։ Թագէտսի պատմութենէն⁵ սովորեք էր՝ թէ սրբոց գերեզմանք նախ զազտնի մնալու էին, և գանձոք գտնելու համար՝ անհրաժեշտ էր տեսիլ մը և գերեզմանին իւրովի ճեղքուիլը։ Իսկ Խորենացւոյն կեղծ թղթէն ուսած էր Բարթողոմէոսի կարծեցեալ հանգստավայրին Որիանոս (Ուրբանոս) ու Բարմ անունները։ Եւ այդ տարերքն իրարու խառնելով՝ շինեց նշխարաց գիւտը։ Որով և պէտք չեղաւ ըսել մեզ՝ թէ Հայք ինչպէս թոյլ տուին այդ ասորի նշխարագողերուն միայնակ գիշերելու կատարել ու փախչիլ գիշերային առանց իմացուելու. գործ մը, որուն ինչպէս պատահումը, նոյնպէս հաւատալն ալ շատ գիւրին բան չէ։

Ուրիշ քացատրութեամբ, առաքելոյն ոսկրները կը հանգչէին անծանօթ Որիանոսի անծանօթ Բարմ տեղւոյն եկեղեցւոյն բեմին վրայ՝ անծանօթ գերեզմանի մը մէջ, զոր տեսիլ մը կը յայտնէ, և

1. Գրէ. Թ. 653 (Ենթ. 1204 ընտրէ). Թ. 1014 (Ժ. զար). Թ. 41 (Հին բուրգեր). — 2. Վարդ սրբոց,

Թ. 447. — 3. Labourt, 89. — 4. Անդ. — 5. Աստ՝ 262.

դարձեալ անծանօթ կը մնայ: Պատմութիւն չէ այս, այլ միջնադարեան երազատեսութիւն մը, որ թէ ինչ նպատակով ստեղծուեցաւ, քաջայայտ է: Մեր այդ գրիչը գիտէ՞ր որ Բարթոլոմեայ նշխարները յունական կայսերութեան մէջ կը գտնուէին, զորս հաւանօրէն աւանդութիւնը Նիքիական կ'անցունէր դէպ ի յաջորդ հանգստարանները: Սակայն հայ աւանդութիւնն ու շահը կը պահանջէին՝ որ առաքեալը նախ նահատակուած ու թաղուած լինէր ի Հայս: Ինչ պէտք էր ընել ուրիշ: Անոր անծանօթ գերեզման մը նշանակել Հայաստանի մէջ, և նշխարները գաղտնաբար փոխադրել տալ Մարտիրոսաց քաղաքը, Այս ներամտութիւնն է՝ զոր ի գործ կը դնէ նշխարաց գիւտին հայ հեղինակդ, այդքան մերկապարանոց եղանակով մը:

14. Յիշատակներ կան՝ պիտի ըսուի՝ ուղղակի նոյն առաքեալէն մնացած մեր աշխարհի մէջ. մի՞ թէ դրական փաստեր չեն աղոնք իւր քարոզութեան: Աղոնք հնագոյնն է Հոգեաց վանքը, զոր խորհնացոյն առ Սահակ Թղթին համեմատ՝ կը հիմնէ Բարթոլոմէոս, և զայն կազմակերպուած կուսաստանի մը կը վերածէ, զետեղելով հոն Աստուածածնի առաքելագործ պատկերը՝ Բայց նամակդ, միակ աղբիւր սոյն տեղեկութեան, գրուած է Բագրատունի և Արծրունի Թագաւորութեանց շրջանին, որոց կ'ակնարկէ մարգարէական ձեռք՝, որ պատմական լեզուով կը նշանակէ՝ անոնց օրով գրուած լինել, և յետ նահատակութեան Սահակայ ու Համագասպայ՝ 785ին, որոց նոյնպէս կ'ակնարկէ. ուստի և զուրկ է հին յիշատակարանի մը հեղինակութենէն: Շատ հաւանօրէն Թղթիդ միջնադարեան կերտողն էր՝ որ խորհնացոյն պատմութեան մէջ ալ սարգեցոյց նոյն առաքելոյն ի Հայս քարոզութեան յիշատակութիւնը՝ Պատմահօր ամբողջ թուղթ մը շնորհողը կա-

րող էր տող մ'ալ անոր պատմութեան ընծայել:

Անընդունելի է ինձ նաև կոստանոյի մը հաստատութիւնը Բարթոլոմէոսի ձեռքով, վասն զի Դ դարէն յառաջ կուսաստանի գաղափարն իսկ զոյուրթին չուներ քրիստոնէութեան մէջ, թող թէ Հայոց. և անոր առաջին հիմնադիրն եղաւ ս. Անտոն, որ սկիզբ տուաւ վանական համախումբ կենակցութեան, ինչպէս փաստերով հաստատած եմ այլուր՝, և հոս չեմ կրկնել:

Այդքան կեղծեաց հետ կապուած պատկերին առաքելական ծագումն ալ, համառօտօր յիշուած նաև Մեսրոբ երիցէն 967ին՝, յուրին է գուշակել՝ թէ ինչ կրնայ լինել, Երկրորդ տպագրութիւնն է՝ մեր միջնադարեան նախանձայուզից կողմանէ՝ Քրիստոսի անձնագործ պատկերին, զոր ըստ արգարեան զրուցին՝ Թադէոս առարած էր եղեսացուց: Աղով ուզեցին նմանօրինակ պարծանք մ'ալ մեզ տալ: Մոռնալու չենք՝ որ բոլոր քրիստոնէից քով անվաւեր մեծ ու փոքր սրբութիւնք շատ կան այսօր, որոնք քրիստոնէութեան չեն ժուժկալեր, և տեղ չունին վաւերական պատմութեան մէջ:

«Մինչև ցայսօր կը ցուցուի, կ'ըսուի, Օրեաց խաչ կոչուած վայրը, ուր երկու առաքելներ գիշեր մը ի միասին օթեալ նստեցին՝. նոյնը նաև Հ. Ալիշան բռաւ՝: Սակայն մինչև ցայսօր ցուցուիլ չի բաւեր հաստատելու՝ թէ հին դարերն ալ կը ցուցնէին: Ամէն ազգերու աւանդութիւնք շատ զուրաւ կրնային խուզարկել պատմական կամ նօսրական համբաւ ունեցող վայրեր, գտած կարծիլ և ցարդ մատնանշել. բայց այդ բանը պատմութեան հետ չի շփոթուիր: Իմ ծննդավայր Պարտիզակի վերև Ս. Միքաէլ ուխտավայրը կար, ուր ժողովուրդը կը ցուցնէր ու կը յարգէր նոյն վկայի երկվարին սմբակի հետքը՝ գետնի ծանր քարի մը վրայ: Եւ սակայն ս. Միխայիլ կենդանութեանը Պարտիզակը

1. Խորեն. 295. — 2. Նոյն՝ 284. — 3. Հմտ. աստ՝ 9. — 4. Բագր. 1923, 13. — 5. Ստեփն. Է, 40.

— 6. Օրման. Ազգ. 27. հմտ. աստ՝ 11. — 7. Արք. քրիս. 42.

չկար տակաւին. և դիւրին չէ հաստատել՝ թէ յետոյ վկայն երկնքէն հոն իջած լինի իւր ամենի ձեռով:

Համառօտ խօսքով, ոչ մէկ լուրջ, հին ու վաւերական յիշատակարան ունինք, որ կարենայ հաստատել Բարթողոմէոսի ի Հայոց քարոզութեան ու մահուան ապա-
ժաման աւանդութիւնը, որուն հերքող տե-
սանք արտաքին ու ներքին հնազոյն և
հաւատարմագոյն պատմութիւնը:

15. Թողուած չկնքած՝ պիտի պատաս-
խանեմ պատմաբանութեան ընդհարող ու
գրականութեան համար քնասակար կանո-
նի մը, զոր Օրմանեան դրաւ հրապարակի
վրայ: Եկատելով Թաղէական ու Բարթո-
ղիմեան աւանդութեանց մէջ անձանց ու
ժամանակի անյարմարութիւնները, պնդեց՝
թէ աղոնց պատճառաւ «քնաւ առաքել-
լական պատմութեան ստուգութիւնը չի
կրնար վտանգուած սեպուիլ»: Անունե-
րու և տարիներու փոփոխութեամբ՝ աւան-
գական պատմութեանց հիմը չի խախտիր.
եղելութիւններ կրնան իրենց հանգամանք-
ներուն մէջ բերնէ բերան այլալուիլ, բայց
այս պատճառաւ եղելութիւններ իրենց
գոյութիւնը չեն կորսնցնիր»:

Այս փաստաբանութիւնը, իւր պաշտ-
պանած առաքելականութեան այս յետին
ապաւէնը, կրնար արդարեւ համոզիչ լինել
եկեղեցւոյ բեմէն, բայց ոչ և քննադա-
տութեան ճակատին մէջ, «Պատմութեան
ստուգութիւնը» կը պահանջէ՝ որ եղելու-
թիւնը գրութիւն և աւանդութիւն անձանց և
անցից ժամանակակից ու մեծազարդ վկա-
ներէ, որոնք միայն կրնան ճանաչել զա-
նոնք, կապուին ստոյգ անուանց ու թուա-
կանաց հետ, և հետագայը անոցմէ առ-
նուն ու կրկնեն: Իսկ այն որ «բերնէ
բերան այլալուած աւանդութիւն» է,
կրնայ ոչ միայն հանգամանաց մէջ, այլ
և հիմնովին կեղծ ու ստեղծական լինել:
(Որինակ մը միայն. ըստ աւանդութեան,
զոր Խորենացիին յետոյ արձանագրեց,
Հայկ կը պատերազմի ինկայ դէմ Հայքի

մէջ, զայն կը սպաննէ ու կը Թաղէ շիր-
մով Հարցայ մէջ»¹, իսկ քննութիւնը ջրն-
ջեց այդ անուններն ու ինկայ գերեզմանը՝
ամբողջ Հայկագանց պատմութեան հետ՝
իբր առասպելական, անոնց տեղ ղնելով
Ուրարտեան Թագաւորութիւնը: Արդ՝ Հայ-
քի ճակատամարտին «եղելութիւն» ո՞ր
մնաց այսուհետեւ՝ առանց այդ որոշեալ
խառնիքի, կամ ուրիշ որոնք պատերազ-
մած կը լինին Հայքի յիշատակեալ կոիւր:
Ո՞չ ապաքէն անուանց հետ պատերազմ
ալ կ'ոչընչանայ:

Այսպէս նաև ստուգեցիք փաստերով՝
որ «առաքելական պատմութեան» ան-
ձինքը՝ Յուդա-Թաղէոս ու Բարթողոմէոս՝
ոտը կոխած չեն ի Հայաստան. թէ եղե-
սացւոց Արգար Ե արքայն ոչ հայ էր և
ոչ քրիստոնեայ, կամ ուրիշ որոնք առաքել
չէ ընդունած. թէ Ասորիք՝ եօթանասներէն
կարծած ու մեր պահանջած իրենց Աղդէն
անգամ, որ եթէ եղած է՝ Գ դարու սկիզբը
միայն կրնար ապրիլ, մեզ չեն տար. թէ
այդ Աղդէն-Թաղէոսն անոցմէ իրշխիւ մէջ
մեռեալ պատմուած, չէր կարող անգամ
մ'ալ մեր քով մեռնիլ՝ զմեզ պատուելու
համար. թէ մեր Սանատրուկը, ապրած
Բ զարուն, չէր կրնար որ և է առաքեալ
տեսնել ու նահատակել: Թէ Դ-Ե դարե-
րուն Թաղէական առաքելութեան գաղա-
փարը՝ նետուած մատենագրութեան ան-
տես անկիւն մը, և աւանդութիւնը մինչև
Զ դար անգոյ և անյայտ էր մեր ազգին.
Իսկ Բարթողիմեանին յիշատակ և աւան-
դութիւն միանգամայն անծանօթ էին մինչև
Է դար. թէ աղոնց վկայաբանութիւնը
յերիւրուած վէպեր են, ու թողած յիշա-
տակները կեղակարծ. թէ անոնց հանգրս-
տարանք ևս երկար ժամանակ անեւելոյթ
Հայաստանի մէջ, միջին դարուն կը հնա-
րուին նախ թղթի վրայ՝ կեղծ տեսիլնե-
րով, և անոնց ազդեցութեամբ աւելի ուշ
իրենց կարծեցեալ տեղերն ալ կ'ունենան
ու կը սկսին մեծարուիլ:

Ի՞նչ տեսակ առաքելական պատմութիւն
է ուրեքն մերը, որ առաքեալներէն դարեւր
վերջ կը կարկատուի՝ մուրաքածոյ և ի-

1. Ա. Գ. 31-32. — 2. Խորեն. Ա, Ժա.

բարու և ժամանակին հետ անմիաբան ա-
նունենորով, ու նորահնար յիշատակարան-
ներով. կամ այն աւանդութիւնը՝ որ կրնար
այդքան կեղծիքներ շինել, ինչու չկարե-
նար նաև առաքելոց անուններ ստեղծել ու
տալ մեզ, Եւ ինչ կը մնայ այսուհետև
անոր ստորագրեցնել եւ եղբորս երեւնա-
նալ լոկ ապաժաման երազային վէպ մը,
զոր ծնաւ մեր տոհմային նախանձախըն-
դրութիւնն օտարաց դէմ: Այսքան, և ու-
րիշ ոչ ինչ. չխաբենք զմեզ:

ՈՒՐԻՇ ԱՌԱՔԵԱԼՔ. — Ախորժակն ու-
տելով կը բացուի, կ'ըսէ առածը. Երբ
կարկատուն աւանդութիւնը մեր ազգին
պարգեհեց երկու առաքեալ, բաղձանք ար-
թնցաւ աւելին ալ ունենալ, և անոնց թիւն
հրթարով ամօցաւ միջին դարուն: Տողին
մէջ մէկ կամ երկու անուն աւելի դնելու
ինդիր էր պարզապէս. և զորս կը յիշեմ՝
ժամանակի հոգեբանութիւնը ցուցնելու՝
ըստ հերքելու համար, որուն պէտք իսկ
չկար:

Բարթողիմեայ ծանօթ վկայութեան մէջ
նոյն առաքեալն այսպէս կ'աղօթէ. «Մի՛
թողուր ի ձեռանէ զվիճակս զայս, խըն-
դրուածովք Թաղէսի և Թովմայի և Յու-
դայի և իմ Բարթողիմէսի՝ որ հոգացաք
վասն աշխարհիս այսորիկ՝»: Զրոյցը կա-
մարտապէս կեղծ գրուածը, որ Ստ. Սիւ-
նեցւոյն առ Անտիոքայ եպիսկոպոսը թըղ-
թէն՝ յերկուրեւ է, «պարծիմք, կ'ըսէ,
առաքելաւն Թաղէսի և Բարթողիմէսի և
և Յուդայի, նոյնպէս հոգ տարեալ վասն
մեր և Թովմաս՝»: Եւ Սիւնեաց պատմիչն
Արշակ Թագաւորին ըսել կու տայ առ Եւ-
սեբրիս կենարացի այսպէս. «առաքեալն
ստ մեզ (Թաղէս) այլ եւ երիք առաքե-
լովք, որոց հանգիստ և աթոռ և եկեղեցի
և ձեռնադրեալք աստ են բովանդակ՝»:
Նոյն անձինքն են նախորդաց հետ:

1. Նորերէն Թովմաս առաքող եղեր

էր՝ ըսինք՝ Թաղէսի, ուսկից և Կոմիտա-
սայ Զրոյցի բացատրութիւնս, «հոգ տա-
րեալ վասն մեր»: Ասողիկ փափաքեցաւ
զայն ուղղակի բարոյիչ ունենալ մեզ.
«Վիճակեցաւ, կ'ըսէ, Հայոց և Թովմաս
առաքեալն և Բարթողիմէս»⁹. «մինչ ըստ
հիններու՝ Եւսեբրիսի և Եփրեմի՝ կը բա-
րոզէ «Թովմասի կ'Պարթեալ», ըստ Եղիշեայ՝
«յաշխարհն Հնդկաց»¹⁰, որ յառաջ կու
գար ուրիշ հին աւանդութիւնէ մը՝, և ըստ
Նիկեոսի կալիստոսի՝ Եթովպիոյ, Հնդկաց,
Պարթեաց ու Մարաց՝, Հնդկաստանի քա-
րոյիչ դրաւ՝ զայն նաև Կիրակոս, և հա-
յացոց չափով մը, ըսելով՝ թէ հոն նա-
հատակուեցաւ, և քերաւ նշխարք նորա
ի Հայս¹⁰, որուն Գր. Խալիպիցին յարեց՝
«ի զաւան Ընդշտունեաց»¹¹:

Ընդ հակառակն Եղեսիոյ ժամանակա-
գրութիւնը կը հաստատէ՝ թէ 394ին հոն
կը փոխադրուին Թովմայի նշխարնե-
րը, և իբր երկու տարի վերջ Եթերիս
(կամ Սիւրիս) ուխտաւորուին կ'այս-
ցելէ անոր հանգստարանին, զոր և կը
նկարագրէ¹². Նաև ս. Գր. տուրնացին՝ Զ
դարու վերջերը կը հաստատէ՝ թէ «Թով-
մաս առաքեալ ըստ վկայարանութեան նո-
րին պատմի նահատակեալ ի Հնդկիս, որոյ
երանելի մարմինն յետ բազում ժամանա-
կի բարձեալ, ի քաղաքն՝ զոր Ասորիք
Եղեսիս կարդան՝ փոխադրեալ է և անդ
Թաղեալ»¹³: Արդ՝ երբ և ո՞ր բարեսիրտ
եղեսացիք շնորհեցին արդեօք մեզ իրենց
այդ հոգեւոր գանձը, և Հայոց կամ Ռըշ-
տունեաց ո՞ր գիւղին, եկեղեցւոյն կամ
մենաստանին մէջ զրուեցան անոնք: Մի-
զապատ կը մնան այդ ամէնը, ունի զրոյցը
կերտողաց մտքերուն նման, որոնք մէկ
պահանջ միայն ունէին. ամէն զոնով շա-
նալ վար չմնալ զրացի մրցակիցներէն:

2. Գալով Յուդայի, ըստ բարթողիմեան
վկայութեան՝ նա զաղթական թռչնոյ մ'ա-
բազութեամբ անցեր գնացեր էր Հայաս-

1. Սեբրիս, ԺԹ, 28. — 2. Գր. բրքոց, 323. —
3. Անդ՝ 497. — 4. Որբել, 17. — 5. Ասոգ, 46. —
6. Եւսեբ. աստ՝ 228. Եփրեմ, Բ, 359. — 7. Եղիշէ՝

345. — 8. Cabrol, IV, 2074-75. — 9. Պատմ. եկեղ-
Բ, Խ, 4. 10. Յայմ. յնս. Է՛. — 11. Յայմ. յնս. Է՛. —
12. Cabrol IV 2063. — 13. P. L. 71, էջ 373.

տանէն¹։ Այս անցքը մեր յաջորդ գրչաց մտքին մէջ կը թանձրանայ և հաստատուն ճարտգութեան կը փոխուի։ «Կայ յՈրմի ճաղաք Հայոց», կը գրէ միամիտն վանական²։ Գոռնէ այս իմաստով իւր կիրակոս աշակերտն ալ զլուսաւորին ժառանգ կոչեց «երկր սուրբ աթոռոցն թառչէսի և Բարդղղիմէոսի և Յուդայի Յակոբեան»³։ Վանականէն ուսած՝ կրկնեց յետոյ նաև Գր. Անաւարգեցին՝ թէ «Յուդայ գնացեալ ճարտգութեամբ և հասեալ յՈրմի ճաղաքն Հայոց, անդ կատարի նա հատակութեամբ»⁴։ և Գր. Խլաւաւորին՝ թէ «կատարեցաւ յՈրմի ճաղաք Հայոց և անդէն թաղեցաւ»⁵։ Սակայն տեղեկութիւնս հակառակ էր հին պատմւաց, որոնք այլուր զրին Յուդա-Թաղի ճարտգութիւնն ու մահը⁶։ Միջին դարը՝ կերտելու ժամանակ պէտք չէր զգար հին պատմութեան նայելու, մեզ թողով այդ աւելորդ բծախնդրութիւնը։

Յ. Կոստանդին Ա կթղ. աւելի ևս բարդեց առաքելոց թիւը, գրելով առ Հիթուս՝ թէ «հիգ առաքեալք ի յերկրոսսանիցն և երեք յօթանասնիցն ի Հայք կան»⁷։ Առաքելոց չորսը տեսանք. իսկ հինգերորդը լինելու է Շմառն կամ Սիմոն, որոյ առաքելութեան վայրը Պարսկաստան գիտէր Խորենացին, որ լսեւ էր նաև համանուն առաքելոյ մը նահատակութիւնն «ի վերիսփորայ»⁸։ իսկ կիրակոս՝ յետ քարոզելու, կ'ըսէ, Պարսից ու Բարբաղուց, «եկեցալ ի վերին Հայս ի Վրսփորոն, կատարեցաւ նահատակութեամբ յՌուսթաւայ՝ որ կայ ի Թիկանցն Որմեայ»⁹։ մթին թէ տեղեկութիւնը և թէ օտարածայն ա. նուննիւրդ, Որմիէն գատ։ Նիկիոսի կալիստոս (է դար), որ մեր կիրակոսէն հինգ դար յառջ կը գրէր, Շմառնի առաքելութիւնը կը սահմանափակէ Կիւրենէի,

Ափրիկէի, Մաւրիտանիոյ և Լիբիոյ մէջ¹⁰. որով գործ չէ ունեցեր Հայոց հետ, և իւր գալուստն առ մեզ՝ ժի՛ղ դարու գիւտ է։

Գ. Որոնք են եօթանասնից երեքը, զորս յիշեց Կոստանդին՝ վանականի ծառիթ է Դադիոս՝ որ կը քարոզէ ի մեծ Հայս. նոյնպէս Եղիշէ և Խադա՝ քարոզիչք ու վկայք «ի կողմանս Աղուանից»¹¹։ Անկասկած զԵղիշէ առած էր կաղանկատուացիէն, որոյ համեմատ նախ իւր վարդապետ Թադէոսի հետ մեր աշխարհն եկեր և յերևաւորմէ դարձեր էր. և յետոյ կրկին անգամ քարոզութիւնն ելնելով, «խոյս տուեալ ի Հայաստանեայց»¹²։ Աղուանից կ'ըթայ¹³։ Այսքան է իւր կարծեցեալ կապը մեզ հետ։ Կիրակոսի քով կը գտնենք եօթանասներէն նաև «Յուդայ Շապիոս, որ ի Խլաթ (Բզնունեաց) կատարեցաւ»¹⁴։ և ասորմէ գատ այլ աշակերտ չի ճանաչեր։ Անոնց զոյգութիւնն ու թիւը՝ մեր զրչաց յօժարութենէն կախումն է։

Վարդանայ Աշխարհացոյցը (Ժի՛ղ դարու) կը յիշէ ուրիշ մ'ալ. «մեծ Սիւնիս և փոքր Սիւնիս, ուր կայ աթոռ Ստարէի (Թ. 443 Երաստարէի) առաքելուն, որ կոչի Տաթէ»¹⁵։ և Մեծոփեցիէն յաճախ կը յիշուի «չնորհալից աթոռն սուրբ առաքելուն Ստարէոսի» կամ «Ստարէի»¹⁶։ Չամչեան եօթանասներէն համարեցաւ Ստաթէոսը, և նահատակուած ու թաղուած ի Տաթէ¹⁷։ Օրմանեան զայն Թադէոսի աշակերտ քրաւ, և «Սիւնեաց առաջին եպիսկոպոս» ձեռնադրել տուաւ առաքելոյն¹⁸, քնականապէս առանց փաստի։ Իսկ Հ. Ալիշան իրաւամբ կասկածեցաւ այդ անձին վրայ, նկատելով որ նոյն ինքն վանական և Օրբելեան ինքնին չէին գիտեր անոր գոյութիւնը. և որ պիտի չվերապէր անոնց աչքէն ու զրչէն, եթէ յայտնի լինէր աւանդութիւնդ անոնց օրով¹⁹։ Ըստ իս՝ Տաւ.

1. Աւստ՝ 11. — 2. Հնչպ. 47. — 3. Կիրակ. 56. — 4. Յայմ. փառ. 44. — 5. Յայմ. յնս. 1. — 6. Աւստ՝ 228. — 7. Ար. քրիս. 55. — 8. Խորեն. Բ, 14. — 9. Յայմ. յնս. 1. — 10. Պամ. եկեղ. Բ, 1. — 11. Հնչպ. 47. — 12. Կաղանկ. 8. — 13.

Յայմ. ապր. Բ. — 14. Գրե. Բ. 968 Ս. Վլքր. — 15. Մեծոփ. Պամ. 60, 38, 40, 53. — 16. Չամչ. Ա, 299. — 17. Աղեպ. 88. — 18. Սխաւ. 224. Ար. քրիս. 28-24.

բև անուանէն հանուած ձև ու վէպ մ'է Ստարիու:


Ե. Այսպէս միջին դարու հայ լեզուն ոսկր չունի, և ամէն կողմ կը դառնայ անարգել, կը քնանային՝ կ'արթննային, և Հայոց առաքելական ցուցակին մէջ նոր անուն մը կը բուսնէր: Պէտք չկար որ հինքերէն աւանդուէին. իրենց կ'արձաւնազրէին, և հասարակական պատմական կը լինէր: Շնորհակալ լինելու ենք՝ որ զէթ երկար վէպեր չհիւսեցին անոնց մասին: Պարզ ակնարկութիւնք են միայն, ազգասիրութեան վայրկենային ցոյցեր, հերքելիք այն դիրւութեամբ և իրաւամբ որով ըստեցան: Եւ բոլորն ալ ժ դարէն այս կողմ, ուստի և զուրկ են պատմական ամէն հեղինակութենէ, մանաւանդ թէ հակառակ հնոց ու մերժող զիրար, որպէս զի մեր ալ մեր կարգին անաշխատ և անկասկած դուրս թափենք զանոնց հայ եկեղեցւոյ պատմութենէն, որոյ մէջ աւելի կամ պակաս չափով տեղ տուին անոնց՝ Զամբան¹, Ալիշան², Օրմանեան³ և ուրիշներ:

Եւ վերջապէս ինչ տարօրինակ պահանջ եղած է և կը մնայ մերը, մինչդեռ Եղեմիա իւր առաքեալը սիրայօժար ընդունուած ու խաղաղութեամբ վախճանած կը պատմէ իւր մէջ, մեր ցով փոխադրել զայն կենդանի, և անոր հետ մեր հողին վրայ բերել թափել այնքան առաքեալներ, անարգել ու կոտորել տալ զանոնք ամեննէն խուժողով եղանակներով, հնոց, առիժներ, ցուր, մորթագեղձութիւն, խաչ և սուր: Ասով մեր հին զրիչներն ուզեցին աւելի քաղաքակիրթ ցուցնել զմեզ քան զեղեակիւս: և կամ փառք մ'էր արդեօք՝ ձրի Հայաստանի վրայ հրաւիրել Փրկչին առ Երուսաղէմ տուած կշտամբութիւնը՝ թէ «կոտորէիր զմարգարէս և քարկոծ անէնիւր զառաքեալսն առ քեզ»: Հրաժարինք այդ ձախորդ ու մտացածին պար-

ծանցներէն, զորս մեր նախնիք թողուցին մեզ անգիտակցաբար, և իրականութեան փարինք:

(Շարայաբերի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆ



ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ» ՈՒՆ՝



(Շար. տես Բազմ. 1927 էջ 14)

Զ. — Հոլարան (էջ 21-2).

Պ. Աճառեան Առձեռնի մեկնութեան չէ հանած, և կ'ուզէ այս բառին համար «ըմբշմարտունիութիւն հանուելու, մերկանալու տեղ» գրած ըլլար բառգիրքը: Սխալ ենթադրութիւն է թէ Առձ. իր նշանակութիւն «հոլ» = հոլ = խումբ = ժողով իմաստներէն առած ըլլայ. այլ՝ հոլոնեմ, հոլոնեմ բայէն որ բանալ, պարգել, մէջ տեղ հանել կը նշանակէ, ա. նշիկ օրինակները: Ուստի հոս «հոլարան» կամ լաւ ևս «հոլարան», ըսել է բաց տեղ, կրկէս, ազոն, տեսարան = scena: «Առ ցերեզմանօք յաժիւ, այր առ այր և յոյ առ յոյ մարտատեսիկ հոլարանիւն», սապէս կարելի է թարգմանել. Այս պատերազմի կերպարանք ունեցող հրկեմիւն (մէջ), մարդ մարդու, և խումբ խումբի ցով կը թափառին զերեզմաններու շուրջ: Առձեռնի տուած մեկնութիւնը ամենապարզ է, իմաստին յարմար և լաւագոյն:

Է. — Առուգնայք (էջ 56).

Դատաստանագրքի բնագրին և ամենահին օրինակները «Ասեանք» և «Ասեանքութիւն» կը գրեն: Ուստի տգէտ օրինակողի մը սխալը՝ հարկ չկայ մեզ կանոն ընենք, և իբր երբ բան մը արգենք:

1. Զամբ. Ա, 298. — 2. Ար. քրիս. 22-23, 41-47 ևն. — 3. Ար. քր. 30, 45-46.

1. Հր. Աճառեան. Տգ. Վեներիկ 1913.